ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԱՌԱՍՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Անհուն բերկրանքով ողջունում ենք մեր սիրելի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի փառապանծ քառասնամյակը:

Համայն հայ ժողովուրդն այսօր ցնծությամբ է նշում իր ազգային վերածնության մեծ տոնը, ընդմիշտ ազատագրված անցյալի դառն նկատագրի բոլոր փորձություններից: Հայ եկեղեցին իր բոլոր սպասավորներով և հավատացյալ ժողովրդով, ամբողջ աշխարհում, աղոթում է առ Աստված՝ մեր Մայր Հայրենիքի խաղաղ ու երջանիկ կյանքի և բարգավաճման համար, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Թո՛ղ հաստատ մնա Սովետական մեծ Միության ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը:

Թո՛ղ ամենահզոր Արարիչը աննատնում հոգեղ ու կարողություն պարգևի մեր ժողովրդին ու նրա ղեկավարներին, առավել շենացնելու մեր Մայր Հայրենիքը, նվաճելու նորանոր հաղթանակներ իր կյանքի բոլոր մարզերի մեջ:

Կեցցե՛ն հայ ժողովուրդը և մեր վերածնված Մայր Հայրենիքը:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 նոյեմբերի 1960 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի փառապանծ քառասնամյակի առթիվ հաճեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները ու բարեմաղթությունները:

Աղոթում ենք առ Աստված վասն խաղաղության և բարգավաճման ազատագրված հայ ժողովրդի, Սովետական հզոր Միության ազգերի եղբայրական ընտանիքում:

Մաղթում ենք մեր տաղանդավոր ժողովրդին նոր հաջողություններ իր Մայր Հայրենիքի վերաշինության նվիրական գործում:

Այսօր Ս. Էջմիածնի Մայր Տաճարում գոհաբանական մաղթանք կատարվեց վասն անսասանության ու բարգավաճման Սովետական Հայաստանի:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 նոյեմբերի 1960 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հայաստանում սովետական կարգեր հաստատելու փառապանծ քառասնամյակի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

30 նոյեմբերի 1960 թ.
ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Հայաստանի կառավարության և իմ շնորհակալությունը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու փառապանծ քառասնամյակի առթիվ հղած Ձեր սրտագին շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

1 դեկտեմբերի 1960 թ.
ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի փառապանծ քառասնամյակի այս երջանիկ համազգային տոնի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար հաճեցեք ընդունել Խորհրդի և իմ անունից սրտագին շնորհակալություններ:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

30 նոյեմբերի 1960 թ.
ԵՐԵՎԱՆ